

ՄԵԴԻՆԱՅԻ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐՈ

Վերջին շրջանում նոր թափ առած գլոբալիզացիոն գործընթացները միանշանակորեն չեն ընդունվում տարբեր մշակութային համակարգերի կողմից: Այդ գործընթացները առավել մեծ հակազդեցության են հանդիպում այն երկրներում, որոնց բնակչության մեծամասնությունը դավանում է իսլամ: Այս հակազդեցությունները իսլամական հողի վրա ստանում են ծայրահեղականության, արմատականության և ահաբեկչության դրսևորման ձևեր, որոնք իրենց հերթին վտանգում են մարդկության համակեցությունը:

Մեր կարծիքով, խնդիրը արժեքային համակարգերի անհամատեղելիության, այսինքն՝ երկու արժեքային համակարգերի՝ գլոբալիզացիայի և իսլամի հակասության մեջ է: Իսլամի արժեքային համակարգը հասկանալու համար նախևառաջ պետք է ուսումնասիրել և պարզել, թե ինչ է իրենից ներկայացնում մուսուլմանական համայնքը՝ ունեան, քանի որ հենց այն է իսլամական արժեքային համակարգի միակ կրողը:

Մուսուլմանական համայնքի՝ ունեանյի բնույթն ու էությունը ուսումնասիրելու խնդիրը կարևոր է նաև այն պատճառով, որ կարող է օգնել մեզ ավելի լավ հասկանալու մեր անմիջական հարևաններին, քանի որ Թուրքիայի և Ադրբեջանի բնակչության մեծամասնությունը մուսուլման են, իսկ հարավում գտնվում է Իրանի իսլամական Հանրապետությունը:

Սույն հրապարակումը, որ մուսավորապես 622-623թթ. Մուհամմադի և Մեդինայի բնակչության միջև կնքված համաձայնագրի հայերեն թարգմանությունն է, կարևոր է նրանով, որ նախադրյալներ է ստեղծել նոր ձևավորվող մուսուլմանական հասարակության համար:

Այդ համաձայնագիրը ռուս արևելագիտության մեջ ընդունված է անվանել «Մեդինայի համաձայնագիր»¹, իսկ արևմտյան արևելագիտության մեջ այն առավել հայտնի է որպես «Մեդինայի սահմանադրություն» (*The Constitution of Medina*)²: Այս համաձայնագրի համեմատաբար ամբողջական տեքստը մեզ է հասել Իբն Հիշամի (մահ. 834 թ.) միջոցով և գետեղված է «Աս-Սիրա ան-Նաբավիյա» (Մարգարեի վարք) գրքում³: Նշենք նաև, որ այս տեքստն առաջին անգամ է թարգմանվում հայերեն, նույնիսկ ռուսերեն դրա ամբողջական թարգմանությունը չկա⁴:

Հ. Մ. ԳՈՉԱՐՅԱՆ

¹ Տե՛ս Օ. Գ. Большаков, История Халифата I, Ислам в Аравии 570-633, М., 1989, էջ 94:

² Տե՛ս, օրինակ, Montgomery Watt W., Islamic political Thought: the Basic Concepts, Edinburgh University Press, 1987. (անգլերենով համաձայնագրի ամբողջական տեքստին կարելի է ծանոթանալ նշված աշխատությունում): M. Rodinson, Muhammad. Prophet of Islam, London-New-York, 2002. R. Levy, The social structure of Islam, Cambridge University Press 1962, pp. 273-275:

³ Թարգմանության համար Ռիմք է ծառայել այս հրատարակությունը՝

السيرة النبوية لابن هشام، المكتبة العصرية، بيروت ١٤٢٤هـ - ٢٠٠٣م، ج ٢، ص ١٢٦-١٢٩

⁴ Բացառությամբ Ն. Ա. Գայնուլինի թարգմանության, որը այնքի է ընկնում ոչ գիտական մոտեցմամբ և բնօրինակի հետ համեմատելիս ի հայտ են գալիս սխալներ (տե՛ս Ибн Хишам, Жизнеописание Пророка Мухаммада, перев. с араб. Н. А. Гайнуллиной, М., 2003, էջ 221-225):

«Հանուն բարեգութ և գթասիրտ Ալլահի: Սա գրություն է (الكتاب هذا) Մուհամմադ մարգարեի (թող Ալլահի աղոթքն ու խաղաղությունը նրա հետ լինեն⁵), հավատացյալների (المؤمنين), Ղուրեյշ ցեղի մուսուլմանների ու Յասրիբի մուսուլմանների միջև, ինչպես նաև նրանց միջև, ովքեր հետևել և միացել են նրանց ու պայքարել են նրանց կողքին, առ այն, որ.

1. Նրանք միասնական համայնք են (أمة)՝ ի տարբերություն մնացած մարդկանց:

2. Ղուրեյշ ցեղից մուհաջիրները վճարում են արյան գինը և փրկագինը իրենց պատանդների համար՝ համաձայն իրենց պարտականությունների (ربعتهم)⁶, և հավատացյալների միջև գործող կարգի ու մասնաբաժնի (والقسط بالمعروف):

3. Բանու Աուֆցիները, համաձայն իրենց պարտականությունների և հավատացյալների միջև գործող կարգի ու մասնաբաժնի, վճարում են նախկինում հեղված արյան գինը, իսկ ամեն մի տոհմ (طائفة)՝ իր պատանդի փրկագինը:

4. Բանու Սաիդացիները, համաձայն իրենց պարտականությունների և հավատացյալների միջև գործող կարգի ու մասնաբաժնի, վճարում են նախկինում հեղված արյան գինը, իսկ ամեն մի տոհմ՝ իր պատանդի փրկագինը:

5. Բանու ալ Հարիսացիները, համաձայն իրենց պարտականությունների և հավատացյալների միջև գործող կարգի ու մասնաբաժնի, վճարում են նախկինում հեղված արյան գինը, իսկ ամեն մի տոհմ՝ իր պատանդի փրկագինը:

6. Բանու Ջուշայմացիները, համաձայն իրենց պարտականությունների և հավատացյալների միջև գործող կարգի ու մասնաբաժնի, վճարում են նախկինում հեղված արյան գինը, իսկ ամեն մի տոհմ՝ իր պատանդի փրկագինը:

7. Բանու աճ-Նաջարացիները, համաձայն իրենց պարտականությունների և հավատացյալների միջև գործող կարգի ու մասնաբաժնի, վճարում են նախկինում հեղված արյան գինը, իսկ ամեն մի տոհմ՝ իր պատանդի փրկագինը:

8. Բանու Ամր բն Աուֆցիները, համաձայն իրենց պարտականությունների և հավատացյալների միջև գործող կարգի ու մասնաբաժնի, վճարում են նախկինում հեղված արյան գինը, իսկ ամեն մի տոհմ՝ իր պատանդի փրկագինը:

9. Բանու աճ-Նաբիթցիները, համաձայն իրենց պարտականությունների և հավատացյալների միջև գործող կարգի ու մասնաբաժնի, վճարում են նախկինում հեղված արյան գինը, իսկ ամեն մի տոհմ՝ իր պատանդի փրկագինը:

10. Բանու ալ-Աուսցիները, համաձայն իրենց պարտականությունների և հավատացյալների միջև գործող կարգի ու մասնաբաժնի, վճարում են նախկինում հեղված արյան գինը, իսկ ամեն մի տոհմ՝ իր պատանդի փրկագինը:

11. Հավատացյալները չեն լքում այն հավատացյալին, ով ծանրաբեռնված է ընտանիքի անդամներով և պարտքերով (المفرح)⁷ այլ, համաձայն ընդունված կարգի՝ տալիս են նրա փրկության կամ արյան գինը:

⁵ Հետագա թարգմանության ժամանակ այս հատվածը, որը դրվում է Մուհամմադի մարգարեի անունից հետո, բաց է թողնվել:

⁶ بيروت ١٤٢٤ - ٢٠٠٣ م، المسيرة النبوية لابن هشام، المكتبة العصرية، տե՛ս բառի մեկնաբանությունը տե՛ս ج ١٢٩ ص ٢، ج

⁷ «المفرح» բառի բացատրությունը տե՛ս նույն տեղում, հ. 2, էջ 127:

12. Հավատացյալը դաշիմք (يُحالف) չի կնքում մեկ այլ հավատացյալի ազատ արձակվածի (مولى) հետ, առանց այդ հավատացյալի համաձայնության:

13. Աստվածավախ հավատացյալները դեմ են իրենցից նրան, ով կնեղացնի կամ կցանկանա մեծ չարություն կամ հանցագործություն ու թշնամություն կգործի կամ էլ այլասերում կտարածի հավատացյալների մեջ: Նրանք բոլորը դեմ դուրս կգան այդ մարդուն, անգամ եթե նա իրենցից մեկի որդին է:

14. Հավատացյալը չի սպանում հավատացյալին անհավատի պատճառով և չի օգնում անհավատին՝ ընդդիմանալով հավատացյալին:

15. Ալլահի հովանավորչությունը (نُمة) համընդհանուր է (واحدة): Նա հովանավորում է նաև ամենացածրին, և, իսկապես, ի հակադրություն այլ մարդկանց, հավատացյալները հովանավոր են իրար հանդեպ:

16. Հրեաներից նրանք, ովքեր հետևել են մեզ, հովանավորություն ու օգնություն են ստանում, իսկ մենք չենք օգնում և աջակցում (որևէ մեկին - Հ.Ք.) ընդդեմ նրանց:

17. Հավատացյալների խաղաղությունը ամբողջական է: Հանուն Ալլահի մղվող պայքարում հավատացյալը առանց այլ հավատացյալի խաղաղություն չի կնքում, քանի դեռ ապահովված չեն արդար և հավասար պայմաններ նրանց երկուսի համար:

18. Մեզ (հավատացյալների-Հ.Ք.) հետ ասպատակություններին (غزاية) մասնակցած յուրաքանչյուր հավատացյալ ժառանգում է մյուսից (يعقب):

19. Հավատացյալները վրեժխնդիր են լինում (يبيي) այլ հավատացյալների արյան համար, որը թափվել է հանուն Ալլահի (في سبيل الله): Իսկ աստվածավախ հավատացյալը գտնվում է ամենալավ և ուղիղ ճանապարհին (على احسن هدى):

20. Ոչ մի անհավատ (مشرك) չի երաշխավորում (يجر) Ղուրեյջցիների անձի և ունեցվածքի անվտանգությունը և հանուն դրա՝ դեմ չի դուրս գալիս հավատացյալներին:

21. Եթե որևէ մեկը հանկարծակի սպանել է հավատացյալին, և նրա մեղքը բացահայտ է, ապա նա պիտի սպանվի ի պատասխան, բացառությամբ այն դեպքերի, երբ սպանվածի հովանավորը (ولي) համաձայնում է արյան գնի հետ: Բոլոր հավատացյալները դեմ են սպանողին, և չի կարող լինել այլ դիրքորոշում:

22. Հավատացյալը, որը ընդունում է այն, ինչ գրված է այս «փաստաթղթում» (الصحيفة) և հավատում է Ալլահին ու Ահեդ դատաստանին, չպետք է օգնի, ոչ էլ օթևան տա կարգազանցին (محدث), իսկ նա, ով օթևան կտա և կօգնի նրան, կարժանանա Ալլահի անեծքին ու Ահեդ դատաստանի կտտանքներին, և չեն ընդունվի նրա զոջումները:

23. Եթե ինչ-որ տարածայնություններ ունեք (փաստաթղթին մասնակցողներ - Հ.Ք.), ապա պարզաբանումների համար դիմեք Ալլահին և Մուհամմադին:

24. Քանի դեռ հավատացյալները պատերազմում են, հրեաները նրանց հետ միասին են հոգում ծախսերը:

25. Բանու Աուֆ ցեղի հրեաները հավատացյալների հետ մի համայնք են (أمة), հրեաները մնում են իրենց կրոնին (دين), իսկ մուսուլմանները՝ իրենց: Սա վերաբերում է նաև նրանց կողմից ազատ արձակվածներին (مولى): Նա, ով անարդարություն և հանցանք է գործում, մեղավորությունը կիսում է միայն իր ընտանիքի անդամների հետ:

26. Բանու ամ-Նաջար ցեղի հրեաները մնան են Բանու Աուֆցիներին:

27. Բանու ալ-Հարիս ցեղի հրեաները մնան են Բանու Աուֆցիներին:

28. Բանու Սա'իդա ցեղի հրեաները մնան են Բանու Աուֆցիներին:

29. Բանու Ջուշում ցեղի հրեաները մման են Բանու Աուֆցիներին:
30. Բանու ալ-Աուս ցեղի հրեաները մման են Բանու Աուֆցիներին:
31. Բանու Թալ'աբա ցեղի հրեաները մման են Բանու Աուֆցիներին: Նա, ով ամարդարություն և հանցանք է գործում, մեղավորությունը կհսում է միայն իր ընտանիքի անդամների հետ:
32. Ջաֆնա տոհմը Թալ'աբա ցեղից է և օգտվում է նույն իրավունքներից:
33. Բանու Շուտայբացիները մման են բանու Աուֆ ցեղի հրեաներին: Աստվածապաշտությունը կանխում է մեղսագործությունը:
34. Թալ'աբայի ազատ արձակվածները (مولى) իրենց մման են:
35. Հրեական տոհմերը մման են իրար:
36. Նրանցից (հրեաներից-Հ.Ք.) ոչ ոք դուրս չի գալիս (պատերազմելու-Հ.Ք.), առանց Մուհամմադի թույլտվության, սակայն ոչ ոք պաշտպանված չէ վրեժխնդրությունից: Եվ եթե ինչ-որ մեկը սպանել է, ապա նա և նրա ընտանիքի անդամներն են պատասխանատվություն կրում, բացի այն մարդուց, ով հանդեպ անարդարացի են վարվել: Ալլահն է ամենաանկեղծ հովանավորը այս փաստաթղթի:
37. Հրեաները հոգում են իրենց ծախսերը, իսկ մուսուլմանները՝ իրենցը: Նրանք օգնում են իրար, երբ ինչ-որ մեկը դեմ է դուրս գալիս այս «փաստաթղթի» (المصحفة) մասնակիցներին: Նրանք իրար բարի ու անկեղծ խորհուրդներ են տալիս: Եվ թող բարեգործությունը հակադրվի մեղսագործությանը: Ոչ ոք մեղքի տակ չի ընկնում իր դաշնակցի (بالحليف) մեղսագործության պատճառով: Օգնություն է ցույց տրվում նեղվածին (للمظلوم):
38. Հրեաները հավատացյալների հետ միասին են հոգում ծախսերը, քանի դեռ վերջիններս պատերազմում են:
39. Այս թղթում հիշատակվածների համար Յասրիբը և նրա ներքին տարածքը սուրբ են (حرام جوفها):
40. Հովանավորյալը (الجار) մարդ է (այսինքն օգտվում է այս փաստաթղթով նախատեսված իրավունքներից - Հ.Ք.), քանի դեռ մեղք չի գործել և չի վնասել:
41. Ոչ մի կնոջ չի տրվում հովանավորություն՝ առանց նրա ընտանիքի թույլտվության:
42. Եթե այս փաստաթղթի մասնակիցները ունեցել են տարածայնություններ և վեճեր, որոնք վտանգում են նրանց հարաբերությունները, բացատրության համար պետք է դիմեն Ալլահին և Մուհամմադին՝ Ալլահի առաքյալին: Ալլահն է ամենաանկեղծն ու ամենաբարեպաշտը և հովանավորը այն ամենի, ինչ զետեղված է այս «փաստաթղթում» (المصحفة):
43. Ոչ ոք հովանավորություն (الجار) չի ցուցաբերում Ղուրեյշ ցեղի անդամներին և նրանց օգնողներին:
44. Նրանք (համաձայնագրի մասնակիցները - Հ.Ք.) օգնում են միմյանց, երբ ինչ-որ մեկը հանկարծակի հարձակվում է Յասրիբի վրա:
45. Եթե կոչ է արվում (հավատացյալներին - Հ.Ք.) դաշինք կնքել ու ընդունել այն, ապա պետք է դաշինք կնքել և ընդունել: Եվ եթե նրանք (անհավատները - Հ.Ք.) մման կոչ են անում, ապա նրանք ընդունելի են հավատացյալների համար, բացի նրանցից, ովքեր պայքարել են հավատքի (دين) դեմ: Յուրաքանչյուր մարդ պատասխանատվություն է կրում իր արարքի համար:

46. Առու ցեղի հրեաները, ինչպես նաև նրանց կողմից ազատ արձակվածները (مولى), հավասար են այս թղթի մասնակիցների հետ և բարեպաշտությամբ ու պարգույթությամբ են վարվում վերջիններին հետ: Եվ թող բարեպաշտությունը հակադրվի մեղսագործությանը:

47. Չարագործը վնասում է միայն ինքն իրեն: Ամենալավն ու բարին, որոնք ընդգրկված են այս թղթում, Ալլահից է: Այս գրությունը (هَذَا كِتَابٌ) չի պաշտպանում չարագործին և մեղսագործին: Նա, ով մեկնում է Մեդինայից, անվտանգության մեջ է, ինչպես նաև մնացողը: Այս ընդունելի չէ չարագործի և անհնազանդի հանդեպ:

Ալլահը հովանավորում է աստվածավախին և բարեգործին, և Մուհամմադը Ալլահի մարգարեն է»: